ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-26/28 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«19» մարտի 2026թ.,**
ժամը՝ 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Արմենակ Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ՝
ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության պետ՝ Գագիկ Վանոյան
ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության դիվանագիտական անձնակազմի բաժնի կցորդ՝ Հրաչ Քեշիշյան
Պետական պահպանության ծառայության աշխատակից՝ Վարդան Մուրադյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. «ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-26/28» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-26/28» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով իրականացվող գնման գործընթացի շրջանակներում սույն թվականի մարտի 11-ին «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին էլեկտրոնային աճուրդի համակարգով ծանուցվել է պայմանագիրը:
1.2 «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, ինչպես նաև ստորագրված պայմանագիրը չի ներբեռնել համակարգ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3 ***, դեմ-*** 0

2. «ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-26/28» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց

2.1 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիրն ստորագրելու իրավունքից (Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից):
2.2 Հաստատել 1-ին և 5-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և հրապարակել, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը (պայմանագիր չի կնքվում):
2.3 Առաջարկել Պատվիրատուի ղեկավարին «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3 ***, դեմ-*** 0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝ Արմենակ Խաչատրյան

Անդամներ՝ Գագիկ Վանոյան

Հրաչ Քեշիշյան

Վարդան Մուրադյան

Քարտուղար՝ Սոնա Շիրինյան